նել է այնտեղ և հանգուցյալի նայիբից ընդունել է «Հերք և Ջրաբերդ ամրոցները, որոնք մտնում էին Առանի գավառների մեջ»[17]։ Այսպիսով, ան-Նասավիի տեղեկությունը ևս խոսում է այն մասին, որ Հերք (Հերքան) բերդը գտնվում էր Աղվանքում, ենթադրելի է Ջրաբերդի հարևանությամբ[18], և 1227—1228 թթ. պատկանում էր Գանձակում Ջալալ ալ- Դինի նշանակած կառավարիչին[19]։

Հերդ գավառի տեղադրությունը, գեթ մոտավոր ճշտությամբ, որոշելու տեսակետից արտակարգ արժեքավոր տեղեկություն է հաղորդում ԺԵ դարի առաջին կեսի հայերեն հիշատակարաններից մեկը. «Սայ էր (ձեռագրի պատվիրատու Առաքելը—Հ. Մ.) բնական ի Հերգա գաւառէ, ի նահանգէ Առանա, ի քաղաքէ Բարտաւա, ի գեաւղէ, որ կոչի Պարիս»[20]։ Այսպիսով, ձեռագրի գրիչը Հերդ գավառը տեղորոշում է Պարտավ քաղաքի մերձավոր հարևանությամբ, ուստի ենթադրելի է, որ Հերդ գավառը ԺԵ դարում (ենթադրելի է՝ նաև ԺԲ—ԺԳ դդ.) մոտավորապես համապատասխանում էր «Աշխարհացույց»-ում իբրև Ուտիքի ութերորդ գավառ հիշատակված Ուտի Առանձնակին, «յորում Պարտաւ քաղաք»[21]։ Սակայն Պարիս գյուղանվան և Մխիթար Գոշի «Աղվանից ժամանակագրությունում» հիշատակված որոշ տեղանունների զուգադրությունը անցյալ դարի տեղագրական աշխատություններում արտացոլված միկրոտեղանունների հետ, թվում է, կարող է առավել ճշգրտել Հերդ գավառի և Հերք (Հերքան) բերդի տեղադրությունը։ Մակար Բարխուդարյանը Արցախի Գյուլիստան գավառում նկարագրում է «Հին-Պարիս աւերակ գիւղատեղի, հանգստարան և եկեղեցի»[22], չմոռանալով նշել, որ «հնուց մի և անբաժան եղած են Ջրաբերդ և Կիւլստան գաւառներս»[23]։ Նույն հեղինակը «Ջրաբերդ գաւառի շարքում» նկարագրում է «շէն և աւերակ տեղեր», որոնք մելիքությունների սկզբնավորումից հետո անցել են Գյուլիստանի մելիքությանը[24]։ Այդ տեղանուններից հատուկ ուշադրության է արժանի «Հոռեկայ

---

[17] **Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави**, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны. Перевод с арабского, предисловие, комментарии, примечания и указатели З. М. Буниатова, Баку, 1973, с. 204.

[18] Այս հիմամբ է միայն Զ. Բունիաթովը Հերք ամրոցը տեղորոշում Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանում, տե՛ս **ан-Насави**, նշվ. աշխ., էջ 384, ծ. 4։ Իր կարծիքը նա ուրիշ ոչնչով չի փաստարկում։

[19] Ջալալ ադ-Դինը բացակայում էր Անդրկովկասից 1227 թ. վերջից մինչև 1228 թ. երկրորդ կեսը, ուստի Շարաֆ ալ-Մուլքի ձեռնարկումները, որոնք նկարագրում է ան-Նասավին (տե՛ս **ан-Насави** նշվ. աշխ., էջ 199—215) թվագրվում են 1227—1228 թթ., տե՛ս The Cambridge History of Iran, vol. 5, Cambridge, 1968, p. 329—332։

[20] «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանները», մասն Ա (1401—1450), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 205։ Ա. Հովհաննիսյանը կարծում է, որ «Հերգա»-ն կարելի է նույնացնել Ցրիկի տաղերից մեկի «շատ մի դատեցա... ի Հարգա» արտահայտության տեղանվան հետ և այդ հիման վրա նորովի լուսաբանել բանաստեղծի կենսագրությունը (տե՛ս Ա. Հովհաննիսյան, Ցրիկը պատմա-քննական լույսի տակ, Եր., 1955, էջ 112—116)։ Քննվող տեղանունների հեշտությամբ վերականգնվող ուղղական հոլովաձևերի («Հերդ»-«Հարգա») համեմատությունը, սակայն, ստիպում է լրջորեն կասկածի տակ առնել առաջարկվող նույնացման հնարավորությունը։ Ավելի հավանական է թվում «Հարգա»-ի ներքո Կիլիկիայի Հաջըն (Հաճըն) քաղաքը նկատի ունենալու մասին վարկածը, տե՛ս Ա. Ղանալանյան, Ցրիկի կյանքն ու ստեղծագործությունները, «Ցրիկ» (ժողովածու), Եր., 1937, էջ 29, Ցրիկ, Բանաստեղծություններ, կազմեցին Մ. Մկրյան և Ե. Թորոսյան, Երևան, 1941, էջ 11, Ցրիկ, Դիւան, ի լոյս ընծայեց Տիրայր արքեպիսկոպոս, Նյու-Յորք, 1952, էջ 30—31։

[21] Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Եր., 1963, էջ 109։

[22] Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 250։

[23] Նույն տեղում, էջ 240։

[24] Նույն տեղում, էջ 231։